

պատրիարքարանին սանդուխներէն թաւալգլոր վար նետել կուտար հովուապետի պաշտպանութեանը դիմող հարստահարուած խեղճ հայերը:

*Յեղին զաւակը* նմանապէս բռնութեան սահմաններէն դուրս գրուած վիպակ մըն է, որ *Տան սէրէն* յետոյ յաջողագոյնն է Զարդարեանի վիպակներուն: Չարսանճաքէն – որքան չար նոյնքան աղէտալի այդ սանճաքէն – Վարդան կ'իյնայ – շատերու պէս – Խարբերդ սովալլուկ, պատառ մը հաց մուրալու, քուրջերով ծածկուած, ահռելի վիճակի մէջ: Կու տան, կ'ողորմին իրեն. նուազ պատռուած ցնցոտիներ կը հագցնեն. է'հ, քիչ մը մարդկային ձեւ կ'առնէ խեղճը. եւ, երեւակայելով որ անիկա այլ եւս պառկելու տեղ ալ ունի, բաղնիքին քիւլխանը: 95 է, կոտորածի ուրուականը որոտագին կը հասնի Խարբերդ. քաղաքացիները կը փախչին խելակորոյս. հարուստները եւ աղաները ողջ մնալու բնագդէն անձնատուր կ'ըլլան եւ կ'իսլամանան: «Քանի մը ժամ ետքը հայ թաղերուն, խաչանիշ գմբէթներուն, զանգակատներուն վրայ սաւառնեցաւ Մուհամմէտին ահաւոր ուրուականը եւ Խուրանին մահասփիւռ սարսափին տակ կծկուեցան ամէնքն ալ, որովհետեւ հալածական բնակչութիւնը սելեվէթ բերաւ եւ իսլամացաւ». կարգը կուգայ մոռցուած անկիւններուն, նկուղներուն, հրացանակիր երեք իսլամներ ներս կը մտնեն բաղնիքին քիւլխանէն: Շնչառութիւն մը կայ հոն: Վարդանն է որ մոխիրներուն տակէն դուրս կը ցցուի.

– Անունդ ի՞նչ է:

– Վարդան:

– Շուտ, սելեվէթ բեր:

– Յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:

«Չարսանճաքի սովէն փախած, անօթի, թշուառ ու արհամարհուած տղուն հոգեկան արիւթիւնը, բարոյական անհաւատալի զօրութիւնն էր որ յանկարծ աղբին, փոշիին եւ մուրին մէջէն կը ծառանար աներկիւղ, ու ցեղին դուրսի գետնամած մեծութիւնը, վեհանձնութիւնն էր որ յանկարծ կը մարդեղանար հոտ քիւլխանին խորը՝ Վարդանին մէջ: